ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին

ԵԴ2/1487/02/24 ք. Երևան
8 Ապրիլի 2024թ.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Գոհար Գրիգորյանի, ծանոթանալով «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից հայցադիմումին.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվորի անունից ներկայացված հայցադիմումը Դատարանի 12.03.2024թ. որոշմամբ վերադարձվել է:
18.03.2024թ. հայցադիմումը ներկայացվել է կրկին, որը նույն օրը մակագրվել է Դատարանին: Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, Դատարանին հասանելի է դարձել 08.04.2024թ.:
(1) Ուսումնասիրելով կրկին ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ հայցվորի ներկայացուցիչը վերացրել է Դատարանի մատնանշած թերությունը, ինչպես նաև հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքերը:
(2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը

կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Դատարանը գտնում է, որ պատասխանողից պետք է պահանջել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ և 234.6 հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կրկին ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ և համարել առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեից պահանջել սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, դատարան ներկայացնել թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/13» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Digitally signed by GRIGORYAN GOHAR 7611950401 Date: 2024.04.11 18:43:03 AMT **Գոհար Գրիգորյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am